ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1635 16.05.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի մայիսի 12-ին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ, արձանագրել է, որ որոշ ձերբակալվածներ՝ Գ.Գ-ն, ով ձերբակալվել էր 25.01.2016թ-ին և Ա.Ռ-ն, ով ձերբակալվել էր 26.04.2016թ-ին ՁՊՎ-ից ազատ են արձակվել դատավորի որոշման հիման վրա, որտեղ պարզապես դատավորը մերժել է դատախազի միջնորդությունը տվյալ ձերբակալվածներին կալանավորելու վերաբերյալ:

Փաստենք, որ դատավորի տվյալ որոշումները հիմք չէին կարող հանդիսանալ ՁՊՎ-ի վարչակազմի համար նշված անձանց ազատ արձակելու, որովհետև դատարանը մերժել է նրանց նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը, իսկ տվյալ ձերբակալվածներին ազատ արձակելու որոշումը պետք է իրականացներ վարույթն իրականացնող մարմինը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրածը և տալ մեկնաբանություն:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԲԹ № 2439
17 05 16 թ.

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՎ ՄՏԻՆԱՐԱԿԱՆ
ՄՏԲԹ № 3171
«16» 05 2016թ.

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ**

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 2105 <<09>> 06 2016թ.

Ձեր 16.05.2016թ. թիվ 2621/1635 գր.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ մայիսի 12-ին ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Տավուշի մարզային վարչության կողմից կատարվել է ստուգում, որի արդյունքով տրվում է ներքոշարադրյալ մեկնաբանությունը:

Ձերբակալվածներ՝ Պ.Գ.-ն (այլ ոչ թե Գ.Գ.-Ն) և Ա.Ո.-ն համապատասխանաբար 27.01.2016թ. և 29.04.2016թ. ՁՊՎ-ից տեղափոխվել են Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու համար:

Դատարանի կողմից Պ.Գ.-ի և Ա.Ո.-ի նկատմամբ խափանման միջոց՝ կալանք կիրառելու դատախազի միջնորդությունը մերժվել է և վերջիններս դատարանի դահլիճից վարույթն իրականացնող մարմնի կողմից ազատ են արձակվել:

Նշված ձերբակալվածներին ազատ արձակելու վերաբերյալ որոշում չկայացնելու համար դիտորդների խմբին խորհուրդ է տրվում դիմել Տավուշի մարզային դատախազություն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ տվյալ դեպքում ձերբակալված անձանց իրավունքները չեն խախտվել:

**ՀՀ ոստիկանության շտաբ**